ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2024 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի №397Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, (այսուհետ՝ Կարգ), այդ թվում՝ Կարգի 78-րդ, 81.2-րդ կետերը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի նոյեմբերի 8-ի հայտը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2024 թվականի նոյեմբերի 22-ի №ԴԽ/22.2/37858-2024 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №397Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված

էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0623 լիցենզիա) ամրագրված «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Որոշման մեջ «մինչև 2024 թվականի դեկտեմբերի 1-ը» թվերը և բառերը փոխարինելով «մինչև 2025 թվականի մարտի 1-ը» թվերով և բառերով:

2. «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ԼԷ №0623 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

   1) մեկամսյա ժամկետում «Բիբլոս Բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի սեպտեմբերի 17-ի №1214 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված, 2020 թվականի նոյեմբերի 30-ի №1549, 2022 թվականի հունիսի 30-ի №826, 2023 թվականի սեպտեմբերի 29-ի, 2024 թվականի օգոստոսի 15-ի №1337 գրություններով գործողության ժամկետը երկարաձգված ԲԲԱ05/2018 երաշխիքի համաձայն երաշխավորված 137 500 000 (հարյուր երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 68 750 000 (վաթսունութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 137 500 000 (հարյուր երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2025 թվականի ապրիլի 14-ը գործողության ժամկետով:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- նոյեմբերի 2024 թ.